

Հավելված 2  
2022 թ. 01.20-ին  
կնքված N ԴՏՊ-1160-11012/Մ-3 պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 1**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

<b>Ծրագրի անվանում</b>	«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական/վերականգնողական աջակցություն ցերեկային կենտրոնում»
<b>Դրամաշնորհի N</b>	N ԴՏՊ-1160-11012/Մ-3
<b>Դրամաշնորհատու կազմակերպություն</b>	ՀՀ ԱՍՀՆ
<b>Դրամաշնորհառու կազմակերպություն</b>	Մանկական զարգացման հիմնադրամ
<b>Ծրագրի իրականացման ժամանակահատված</b>	01.2022թ. - 12.2022թ.
<b>Հաշվետու ժամանակահատված</b>	Հուլիս- սեպտեմբեր 2022թ
<b>Ներկայացման օր</b>	11.10.2022թ.
<b>Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)</b>	Ծրագրի համակարգող՝ Անուշ Զեյնալյան

## 2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Պարբերաբար իրականացվել է հաշմանդամություն ունեցող, առողջական և/կամ տարբեր խնդիրներ ունեցող, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների երեխաների հայտնաբերման և ցերեկային կենտրոններ ուղղորդման աշխատանքներ:

Ցերեկային կենտրոնները շահառուներին սպասարկել են շաբաթը հինգ օր՝ հետևյալ բովանդակությամբ.

- կյանքի հմտությունների ուսուցանում,
- հոգեբանի, հատուկ մանկավարժի, լոգոպեդի ծառայություններ,
- արտ-թերապիա, երաժշտա-թերապիա, /բացիկների պատրաստում/,
- ադապտիվ ֆիզկուլտուրա,
- սոցիալական աշխատողի ծառայություն:

Շահառուներին մատուցվող մասնագիտական բոլոր ծառայությունները գրանցվել են կենտրոնների մատյաններում և մասնագետների ամենամսյա գրանցման թերթիկներում:

Անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահառուների տեղափոխում համայնքներից ցերեկային կենտրոններ:

Ծրագրի ղեկավարը և համակարգողը իրականացրել են պարբերական այցեր կենտրոնների աշխատանքները և ծրագրի ընթացքը լավագույնս ապահովելու համար:

Շահառուների սոցիալական ներառումն ապահովելու նպատակով կազմակերպվել են հանրային միջոցառումներ. Վայքի ցերեկային կենտրոնում <<իմ երազած մանկությունը>>, <<հայկական ասացվածքների վերծանումը խաղի միջոցով>> խորագրով միջոցառում, ինչպես նաև <<մրջյունների պատերազմը>> հոգեբանական մուլտֆիլմի դիտում և քննարկում:

Բազմամասնագիտական խմբի կողմից անցկացվել են քննարկումներ շահառուների և նրանց ծնողների հետ հետևյալ թեմաներով <<ինչպես հաղթահարել սթրեսը պատերազմական իրավիճակներում>>, <<ինքնախնամքը արտակարգ իրավիճակներում>>, <<բնակչության պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում>>:

Սոցիալական աշխատողները շարունակաբար իրականացրել են խորհրդատվություններ՝ ուղղված շահառուների սոցիալական, կրթական, հոգեբանական, առողջապահական խնդիրների բարելավմանը:

Մատուցվող ծառայությունների որակի բարելավման և ծնողների գոհունակությունը ստուգելու նպատակով իրականացվել է հարցում: Անցկացվել է հարցաթերթիկային հարցում ծնողների հետ: Հարցմանը մասնակցել են ծրագրի բոլոր շահառուների ծնողները: Հարցաթերթը իրենում ներառել է Աղյուսեջանի կողմից սեպտեմբերի 13-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով առաջացած խնդիրների շուրջ հարցեր: Հարցման արդյունքները կարող եք տեսնել ստորև:

Իրականացվել են պլանավորման աշխատանքներ հաջորդ հաշվետու եռամսյակի ընթացքում

խորհրդատվությունների մատուցման, ծնողների հետ հանդիպումների, երեխաներին ծառայությունների տրամադրման, վերապատրաստումների և միջոցառումների անցկացման վերաբերյալ:

Աղբբեջանի կողմից սեպտեմբերի 13-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով մասնավորապես Ջերմուկ համայնքի շահառուները, ինչպես նաև մասնագիտական ողջ անձնակազմը տեղահանվել է, ինչի հետևանքով ցերեկային կենտրոնում ծառայությունները սեպտեմբերի 13-ից կասեցվել են. շահառուների և նրանց ընտանիքների հետ պարբերաբար հեռախոսային կապ է հաստատվել և հեռավար սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն մատուցվել: Մանկական զարգացման հիմնադրամի կողմից ծրագրի շահառու 4 ընտանիքների, ըստ կարիքի տրամադրվել է հումանիտար աջակցություն՝ հագուստ, կոշիկ: Սեպտեմբերի 26-ից Վայքի ցերեկային կենտրոնը կրկին բացվել է և ողջ ծավալով շահառուներին մատուցել ծառայություններ: Ջերմուկի ցերեկային կենտրոնը նույնպես սեպտեմբերի 23-ից վերաբացվել է, սակայն ողջ ծավալով աշխատանքները իրականացվել են հոկտեմբերի 3-ից:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**


Ծառայությունների որակը բարելավելու նպատակով շահառուների ծնողների հետ իրականացվել է անանուն գնահատում:

Հարցմանը մասնակցել է 32 ծնող.

Ստորև ներկայացնում ենք հարցմանը մասնակցած ծնողների պատասխանները.


1. Ի՞նչ ծառայություններից է օգտվել կամ օգտվում Ձեր երեխան ցերեկային կենտրոնում.

32 ответа




2. Որքա՞ն ժամանակ է երեխան հաճախում ցերեկային կենտրոն.


32 ответа




3.Նշեք Ձեր գնահատականը մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ ընտրելով այն ծառայությունը կամ ծառայությունները որից, դո...տ վատ, 2-վատ, 3-բավարար, 4-լավ, 5-գերազանց/  
32 ответа



4.Ձեր երեխան ունի հաշմանդամության կարգավիճակ  
32 ответа




5.Տրամադրված ծառայությունների արդյունքում ինչպիսի՞ արդյունք եք գրանցել  
32 ответа




6. Արդյո՞ք Դուք մասնակցել եք ցերեկային կենտրոնի մասնագիտական թիմի կողմից ծնողների համար կազմակերպված սեմինարների/դասընթացների

32 ответа




7. Ինչպե՞ս կգնահատեք ծնողների համար անցկացվող սեմինարների որակն ու արդյունավետությունը՝ 1-5 գնահատման սանդղա...վատ, 2-վատ, 3-բավարար, 4-լավ, 5-գերազանց/

32 ответа




8. Ինչպե՞ս կգնահատեք ծնողներին տրամադրվող մասնագիտական անհատական խորհրդատվության որակն ու արդյունավետություն... վատ, 2-վատ, 3-բավարար, 4-լավ, 5-գերազանց/

32 ответа



9. Աղբյեջանի կողմից սեպտեմբերի 13-ին սանձազերծված ռազմական գործողությունների արդյունքում ընտանիքը արդյո՞ք տեղահանվել է

32 ответа




9.1. Որտե՞ղ է ընտանիքը ապաստանել /նշել մարզը, համայնքը/

- Քաղաք Երևան
- Վայոց ձորի մարզ, ք Վայք
- Քաղաք Արմավիր
- Արարատի մարզ, քաղաք Մասիս
- Վայոց ձորի մարզ, ք Եղեգնաձոր
- Կոտայքի մարզ, ք Հրազդան
- Արարատի մարզ


## 9.2. Որքա՞ն ժամանակ է ընտանիքը տեղահանված փաստացի բնակության հասցեից

17 օրվետօր




## 9.3. Ընտանիքը ինչ՞ առումներով է տուժել

32 օրվետօր



## 9.4. Ընտանիքը ինչպիսի՞ աջակցություն է ստացել

32 օրվետօր





Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն):

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Սոցիալական ծառայություններից օգտվող և կենտրոն հաճախող յուրաքանչյուր շահառուի զարգացման առանձնահատկությունը և դրանից բխող խնդիրները անհատական են, ուստի հաշվի առնելով մարզում առկա կարիքն ու ծառայությունից օգտվող երեխայի ու նրա ընտանիքի կարիքը, հիմնական խնդիրը ծառայությունների տրամադրաման ֆիքսված ժամաքանակն է:

Ադրբեջանի կողմից սեպտեմբերի 13-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով՝ մասնավորապես Ջերմուկ համայնքի շահառուները տեղահանվել և ապաստանել են Հանրապետության տարբեր մարզերում և քաղաք Երևանում: Սեպտեմբերի 13-ից ցերեկային կենտրոններում ծառայությունները ժամանակավոր կասեցվել են և հնարավոր չի եղել ծառայությունները ողջ ծավալով մատուցել: Սոցիալական աշխատողների և հոգեբանների կողմից պարբերաբար հեռախոսային կապ է հաստատվել շահառուների և նրանց ընտանիքների հետ և մատուցվել սոցիալ-հոգեբանական խորհրդատվություններ:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Պարբերաբար մասնագիտական թիմի կողմից կիրականացվեն կարիքի գնահատմանն ուղղված տնային այցեր, կիրականացվեն հաշմանդամություն ունեցող, առողջական և/կամ տարբեր խնդիրներ ունեցող, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների երեխաների հայտնաբերման և ցերեկային կենտրոններ ուղղորդման աշխատանքներ:

Կենտրոնի սոցիալական աշխատողները կիրականացնեն ծնողավարման դասընթացներ, ինչպես նաև կտրամադրեն մասնագիտական անհատական խորհրդատվություն՝ ուղղված ծնողների ծնողավարման հմտությունների բարելավմանը, կյանքի որակի բարձրացմանը:

ՄՁՀ սուպերվիզորները պարբերաբար կիրականացնեն այցեր կենտրոնների մասնագետների աշխատանքի ընթացքին ծանոթանալու, ինչպես նաև մասնագիտական թիմին խորհրդատվություն տրամադրելու համար:

Շահառուների սոցիալական ներառումն ապահովելու նպատակով կկազմակերպվեն առնվազն 2 հանրային միջոցառումներ:

Մատուցվող ծառայությունների որակի բարելավման և ծնողների գոհունակությունը ստուգելու նպատակով շահառուների ծնողների հետ կիրականացվի հարցում:

Պատերազմական վերջին իրադարձություններից ելնելով համապատասխանաբար կկազմվեն հոգեբանական խմբեր, որտեղ շահառուները և նրանց ընտանիքի անդամները կստանան համապատասխան հոգեբանական աջակցություն:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Տնօրեն՝ Լ. Միմոնյան

Մանակական զարգացման հիմնադրամ

